Գործակալք առանձին փարատեցին զտարակուսանս Հայոց վասն տարաժամ մեկնելոյ Ոստիկանին, զի խորհրդով եւ գրով իւրեանց առաքեալ էին զայն ծանուցանել Կուսակալին զպատճառս երկարելոյ գործոյն և զյամառութիւն Դատաւորին, և վերստին դառնալ հրամանագրով նորին, կատարել զգործն ըստ հրամանի Արքային։ Ի սոյն խորհուրդ գտան նաև Խօճաքեանն և Քաղաքապետն, թէպէտ և նոքա 'ի ներքուստ էին 'ի կողմն Ցունաց, այլ յայտնի չկարէին խօսիլ ինչ, զի երկնչէին 'ի Նուրի Էֆէնտիէ։ Իսկ Դատաւորն դանկատանս գրեալ էր ծածկարար զՄէհէմմէտ Պէյէն, յաւուր յորում կռուեցան 'ի տաճարին Ս. Յարութեան ('ի 29 Մայիսի) և 'ի ձեռն Քաղաքապետին յղեալ էր զթուղթն առ Բդեշխն։

Յետ մեկնելոյ Ոստիկանին, եհաս գիր 'ի Կուսակալէն առ Դատաւորն, ընդ նմին եւ գիր հրամանի (յ8 Ցունիսի), և կազմեցաւ ժողով 'ի Դատարան. ընթերցաւ հրամանագիրն և յայտնեցաւ դանկատ Դատաւորին, և զգործն կատարել ասէր ըստ հրամանի Արքային օրինօք Շէրիի առանց պաշտպանելոյ զոք։ Սակայն սքանչանային որք անտեղեակք էին, թէ զիա՞րդ մեկնեցաւ ատի Ոստիկանն հրամանաւ Բդեշխին, եւ անուն նորա գրեալ է 'ի գիրն ընդ այլ Գործակալս։ Դատաւորն ասէ. լուա՞ք արդեօք զհրաման Կուսակալին, ահա այսօր ունկնդիր եղէց բովանդակ ամբաստանութեանց ձերոց և կատարեցից զայնս օրինօք Շէրիի։ Եհարց երիցս ցՀայս, զի՞նչ են դատ ձեր, լռութիւն, և 'ի չորրորդին ասեն. հարցմանդ հարկ եղեւ տալ պատասխանի, սակայն բազմականք բարւոք 'ի միտ առեալ արձանացուսցեն լինել վկայ 'ի ժամանակի իւրում։ Նախ չունիմք դատ, երկրորդ չհամարձակիմք վերստին 'ի դատ մտանել ատ. զի վճարեալ է այն առաջի մեծի Դենղետին և Նախարարաց՝ եւ հաճութեամբ երկուց ազգաց տուեալ հրովարտակ և հրամանաւ Արքայի առաքեալ են Գործակալքս այսոքիկ՝ զարժանն դուք գիտէք, և ըզհրաման Արքային բարւոք իմանայք առաւել քան զմեզ։ Եհարց ցՅոյնս, դուք զինչ ասէք, Յոյնք ասեն. վասն դատատանին եղելոյ 'ի Կոստանդինուպոլիս չունիմք գիր ինչ 'ի Պատրիարքէն եւ յազգէն մերմէ, և մեք ինքնագլուխ